8/144

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/70>>

ք. Երևան << 31>> <<մարտի> 2017 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՆՆԱ 80>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ռ. Վարդերեսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոցի հարակից տարածքում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման և Կենտրոն վարչական շրջանի Արամի և Մաշտոցի պողոտայի հատման մասում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման* աշխատանքները** (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև **<<2017թ մայիսի 20-ը>>:**

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն

պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **23300000.0 (քսաներեք միլիոն երեք հարյուր հազար)** ՀՀ դրամ, որից **3883333.0 (երեք միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017 թ. ՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է **երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:**

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում **է www.gnumner.am հասցեով** ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..14 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«ԱՆՆԱ 80» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	ք. Վանաձոր. Դ. Դեմիրճյանի 20/23
Կենտրոնական գանձապետարան	ք.Երևան Անդրանիկի 131/1
Հ/Հ 900012410081	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02593108	Հ/Հ 1150002510050100
	ՀՎՀՀ 06906663
Գ. Չթոյան----------(Ստորագրություն)	Ռ. Վարդերեսյան ----------(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
<< 31 >> մարտի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/70>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոցի հարակից տարածքում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման աշխատանքներ

Հ/Հ	Շիֆր, նորմա-տիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուրի արժեքը միավորի համար հազար դրամ	Ընդհանուրի արժեքը հազար դրամ
1	E4-108	Φ295մմ տրամագծով հորատում խճային և գլաքարային գրունտներում	մ	24.0000	15.6335	375.2040
2	E4-110	Φ214մմ տրամագծով հորատում խարամացված և հոծ բազալտների գրունտներում	մ	76.0000	40.4438	3073.7288
3	E4-110	Φ190մմ տրամագծով հորատում խարամացված և հոծ բազալտների գրունտներում	մ	10.0000	40.4246	404.2460
4	E4-162	Հորատանցքի ամրացում խողովակով կցորդային միացում Φ245*6մմ	10մ	2.4000	33.3006	79.9214
5	E4-160	Հորատանցքի ամրացում խողովակով կցորդային միացում Φ168*6մմ	10մ	7.6000	33.3006	253.0846
6	E4-276	Հորատանցքի ելքային մասի ցեմենտացում	սյուն	1.0000	289.7326	289.7326
7	E4-243	Φ245մմ եզրատունկ (обсадочный) խողովակների ազատ իջեցում կամ բարձրացում	10մ	2.4000	133.5335	320.4804
8	E4-243	Φ168մմ եզրատունկ (обсадочный) խողովակների ազատ իջեցում կամ բարձրացում	10մ	7.6000	84.4444	641.7774
9	E4-322	Φ168 մմ ֆիլտրերի տեղադրում	10մ	3.4000	114.2578	388.4765
10	E4-333	Ջրի արտամղում	օր	1.0000	250.1736	250.1736
11	E4-254	Եզրատունկ խողովակների եռակցում Φ245x6մմ	100մ	0.2400	43.3948	10.4148

12	E4-252	Եզրատունկ խողովակների եռակցում Φ168x6մմ	100մ	0.7600	31.8698	24.2210
13	Ц7-300-14	Խորքային պոմպի տեղադրում ԷՑՎ-6-16-75 տիպի 33 կվտ	հատ	1.0000	779.8445	779.8445
14	E22-89	Φ114x3մմ տրամագծի պողպատյա խողովակի տեղադրում	մ	77.0000	3.7405	288.0185
15	E22-432	Φ114մմ տրամագծի կցաշուրթի տեղադրում	հատ	32.0000	5.3415	170.9280
16	E16-137	114մմ տրամաչափի պողպատե սողնակի տեղադրում	հատ	1.0000	20.0212	20.0212
17	E1-1587	Ավելնորդ հողի բարձում ավտոինքնաթափեր	1000մ3	0.0264	393.5950	10.3909
18	C310-13	Տեղափոխում մինչև 13 կմ	տ	52.8000	2.1566	113.8685
						0.00
		Ոռոքման ցանց				
1	E1-1588	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.0127	502.7311	6.3847
2	E1-962	IV կարգի գրունտի մշակում ձեռքով	100մ3	0.0200	364.5884	7.2918
3	C310-13	Տեղափոխում մինչև 13 կմ	տ	12.0000	2.1566	25.8792
4	E27-33	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում h միջ 80մմ	100մ3	0.0170	343.0916	5.8326
5	E27-36	Բազալտե եզրաքարերի քանդում 150x300	մ	5.0000	0.8269	4.1345
6	E1-1587	Շին աղբի բարձում ավտոինքնաթափեր 3.4տ	1000մ3	0.0017	393.5950	0.6691
7	C310-13	Տեղափոխում մինչև 13 կմ	տ	3.4000	2.1566	7.3324
8	E27-42	Բազալտե խճե շերտի հիմնատակի վերականգնում 100մմ հաստությամբ	100մ2	0.2100	95.8086	20.1198
9	E27-164-1	Խոշորահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	100մ2	0.2100	286.0701	60.0747
10	E27-164-2 E27-165-2	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստությամբ	100մ2	0.2100	256.4289	53.8501
11	E27-86-1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 150x300մմ կտրվածքով	100մ	0.0500	877.7552	43.8878
12	E1-970	խրամուղու ետլիցք	100մ3	0.0840	124.7870	10.4821
13	E23-1	Ավազե նախաշերտ h=10սմ խողովակի տակ	մ3	2.1000	5.1563	10.8282
14	E23-1	Ավազե նախաշերտ h=30սմ խողովակի տակ	մ3	6.3000	5.1563	32.4847
15	E22-120	114մմ պոլիէթիլենային խողովակների տեղադրում խրամուղում հիդրավլիկ փորձարկումով	մ	35.0000	3.6385	127.3475
16	E16-137	114մմ տրամաչափի պողպատե սողնակի տեղադրում	հատ	3.0000	20.0202	60.0606

17	E16-137	114մմ տրամաչափի պողպատե հակադարձ փականի տեղադրում	հատ	1.0000	19.9030	19.9030
18	E23-155	Միացում գոյություն ունեցող Φ100 մմ ջգազծին	հատ	1.0000	17.5097	17.5097
19	E22-446	Հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից ջրամատակարարման կլոր հորի իրականացում Φ1200մմ	մ3	1.4000	160.1426	224.1996
20	E23-157	Թուջե մտոցի տեղադրում	հատ	1.0000	60.1658	60.1658
21	E8-59	Մետաղական տարրեր հորի սեյսմակայունության համար	տ	0.0200	342.9293	6.8586
22	E22-365	Պոլիեթիլենային ձևավոր մասերի տեղադրում Φ114մմ	հատ	10.0000	4.6851	46.8510
23	E9-46	Մետաղական աստիճանների տեղադրում	տ	0.0100	491.5677	4.9157
24	E15-614	Մետաղական աստիճանների և տարրերի յուղաներկում երկու շերտ 0.03տ	100մ2	0.0100	104.6604	1.0466
		Էլեկտրամատակարարում				
Հողային աշխատանքներ						0.00
1	E27-33	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում 80մմ հաստ. 66.5մ2	100մ3	0.0532	343.0916	18.2525
2	E27-31	Խճե նախապատրաստական շերտի քանդում 100մմ հաստ. 66.5մ2	100մ3	0.0665	43.1022	2.8663
3	E1-1588	Խրամուղու քանդում IV կարգի գրունտում 0.325x0.65x190մ բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.0401	502.7311	20.1796
4	C310-13	Տեղափոխում մինչև 13 կմ	տ	72.2500	2.1566	155.8144
5	E1-1587	Շին աղբի բարձում ավտոինքնաթափեր	1000մ3	0.0100	393.5950	3.9281
6	C310-13	Տեղափոխում մինչև 13 կմ	տ	19.9600	2.1566	43.0457
7	Ц8-142-1	Ավազե անկողնակի պատրաստում մեկ մալուխի համար	100մ	1.9000	45.2412	85.9583
8	E23-1	Ավազակոպճի ետլիցք խրամուղում	մ3	25.8900	3.5306	91.4072
9	E27-42	Բազալտե խճե շերտի հիմնատակի վերականգնում 100մմ հաստությամբ	100մ2	0.6650	95.8086	63.7127
10	E27-164-1	Խոշորահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	100մ2	0.6650	286.0701	190.2366
11	E27-164-2	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	100մ2	0.6650	335.8570	223.3449
Մոնտաժային աշխատանքներ						0.00
12	Ц8-149-1	ԱԲԲԳ-1 4x35մմ2 մալուխի փոռում ՏԵ-ի կանալով	100մ	0.0500	144.1200	7.2060
13	Ц8-141-1	ԱԲԲԳ-1 4x35մմ2 մալուխի փոռում խրամուղում	100մ	1.9000	148.1616	281.5070

14	Ц8-148-1	АВВГ-1 4х35մմ2 մալուխի մոնտաժում կոնստրուկցիայով, կառավարման արկղին միացնելու համար	100մ	0.0200	146.5548	2.9311
15	ի.տ	Մալուխի ծածկում ազդանշանային ժապավենով b=150մմ	մ	185.0000	0.0739	13.6715
16	Ц8-572-1	Մետաղական պահարանի տեղադրում 600x800x250մմ դռնակով և փականով	հատ	1.0000	35.8557	35.8557
17	Ц8-525-2	Ավտոմատ անջատիչի մոնտաժում պահարանում 63Ա, D տիպի	հատ	1.0000	5.2522	5.2522
18	Ц8-613-2	Եռաֆազ երկսակագնային հաշվիչի մոնտաժում պահարանում 100Ա	հատ	1.0000	106.5690	106.5690
19	Ц8-531-5	Մագնիսական թողարկիչների մոնտաժում պահարանում 80Ա, ղեկավարման կոճակով	հատ	1.0000	47.3591	47.3591
20	Ц8-149-2	ԿԳ 4х25 մմ2 մալուխի ձգում խողովակով, հորում	100մ	0.7700	756.1583	582.2419
21	Ц8-417-3	Վինիպլաստե խողովակ Φ50մմ	100մ	0.7700	156.5749	120.5627
		Ընդամենը				10454.5450
		Շահույթ	10.00%			1045.455
		Ընդամենը				11500.000
		ԱԱՀ	20.00%			2300.000
		Ընդամենը				13800.00

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի և Մաշտոցի պողոտայի հատման մասում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման աշխատանքների

Հ/Հ	Շիֆր, նորմա-տիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուրի արժեքը միավորի համար հազար դրամ	Ընդհանուրի արժեքը հազար դրամ
1	Е4-108	Φ295մմ տրամագծով հորատում խճային և գլաքարային գրունտներում	մ	40.0000	15.7884	631.5360

2	Е4-110	Ф214մմ տրամագծով հորատում մեծաբեկոր բազալտների գրունտներում	մ	15.0000	40.8445	612.6675
3	Е4-110	Ф214մմ տրամագծով հորատում կավային գրունտներում	մ	5.0000	40.8251	204.1255
4	Е4-162	Հորատանցքի ամրացում խողովակով կցորդային միացում Ф245*6մմ	10մ	4.0000	33.6305	134.5220
5	Е4-160	Հորատանցքի ամրացում խողովակով կցորդային միացում Ф168*6մմ	10մ	2.0000	33.6305	67.2610
6	Е4-276	Հորատանցքի ելքային մասի ցեմենտացում	այուն	1.0000	292.6032	292.6032
7	Е4-243	Ф245մմ եզրատունկ (обсадочный) խողովակների ազատ իջեցում կամ բարձրացում	10մ	4.0000	134.8565	539.4260
8	Е4-243	Ф168մմ եզրատունկ (обсадочный) խողովակների ազատ իջեցում կամ բարձրացում	10մ	2.0000	85.2810	170.5620
9	Е4-322	Ф168 մմ ֆիլտրերի տեղադրում	10մ	1.7000	115.3899	196.1628
10	Е4-333	Ջրի արտամղում	օր	1.0000	252.6522	252.6522
11	Е4-254	Եզրատունկ խողովակների եռակցում Ф245х6մմ	100մ	0.4000	43.8247	17.5299
12	Е4-252	Եզրատունկ խողովակների եռակցում Ф168х6մմ	100մ	0.2000	32.1855	6.4371
13	Ц7-300-14	Խորքային պոմպի տեղադրում ԷՑՎ-6-16-50 տիպի 33 կվտ	հատ	1.0000	787.5709	787.5709
14	Е22-89	Ф114х3մմ տրամագծի պողպատյա խողովակի տեղադրում	մ	55.0000	3.7776	207.7680
15	Е22-432	Ф114մմ տրամագծի կցաշուրթի տեղադրում	հատ	18.0000	5.3944	97.0992
16	Е16-137	114մմ տրամաչափի պողպատե սողնակի տեղադրում	հատ	1.0000	20.2196	20.2196
17	Е1-1587	Ավելնորդ հողի բարձում ավտոինքնաթափեր	1000մ3	0.0158	397.4946	6.2804
18	С310-13	Տեղափոխում մինչև 13 կմ	տ	31.6000	2.1779	68.8216
						0.00
		Որորման ցանց				
1	Е1-1588	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.0110	507.7119	5.5848
2	Е1-962	IV կարգի գրունտի մշակում ձեռքով	100մ3	0.0100	368.2006	3.6820
3	С310-13	Տեղափոխում մինչև 13 կմ	տ	13.0000	2.1779	28.3127
4	Е27-33	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում h միջ 80մմ	100մ3	0.0150	346.4908	5.1974

5	E27-36	Բազալտե եզրաքարերի քանդում 150x300	մ	4.0000	0.8351	3.3404
6	E1-1587	Շին աղբի բարձում ավտոինքնաթափեր 3.4տ	1000մ3	0.0015	397.4946	0.5962
7	C310-13	Տեղափոխում մինչև 13 կմ	տ	3.0000	2.1779	6.5337
8	E27-42	Բազալտե խճե շերտի հիմնատակի վերականգնում 100մմ հաստությամբ	100մ2	0.1800	96.7579	17.4164
9	E27-164-1	Խոշորահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	100մ2	0.1800	288.9043	52.0028
10	E27-164-2 E27-165-2	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստությամբ	100մ2	0.1800	258.9695	46.6145
11	E27-86-1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 150x300մմ կտրվածքով	100մ	0.0400	886.4516	35.4581
12	E1-970	խրամուղու ետլիցք	100մ3	0.0480	126.0233	6.0491
13	E23-1	Ավազե նախաշերտ h=10սմ խողովակի տակ	մ3	1.8000	5.2074	9.3733
14	E23-1	Ավազե նախաշերտ h=30սմ խողովակի տակ	մ3	5.4000	5.2074	28.1200
15	E22-120	114մմ պոլիէթիլենային խողովակների տեղադրում խրամուղում հիդրավլիկ փորձարկումով	մ	30.0000	3.6746	110.2380
16	E16-137	114մմ տրամաչափի պողպատե սողնակի տեղադրում	հատ	3.0000	20.2185	60.6555
17	E16-137	114մմ տրամաչափի պողպատե հակադարձ փականի տեղադրում	հատ	1.0000	20.1002	20.1002
18	E23-155	Միացում գոյություն ունեցող Φ100 մմ ջգազծին	հատ	1.0000	17.6832	17.6832
		Էլեկտրամատակարարում				0.00
Հողային աշխատանքներ						0.00
1	E27-33	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում 80մմ հաստ. 87.5մ2	100մ3	0.0700	346.4909	24.2544
2	E27-31	Խճե նախապատրաստական շերտի քանդում 100մմ հաստ. 87.5մ2	100մ3	0.0700	43.5303	3.0471
3	E1-1588	Խրամուղու քանդում IV կարգի գրունտում 0.325x0.65x250մ բարձելով ավտոինքնաթափեր	1000մ3	0.0688	507.7121	34.9052
4	C310-13	Տեղափոխում մինչև 13 կմ	տ	123.7500	2.1751	269.1686

5	Е1-1587	Շին աղբի բարձում ավտոինքնաթափեր	1000մ3	0.0132	397.4975	5.2470
6	С310-13	Տեղափոխում մինչև 13 կմ	տ	23.7600	2.1751	51.6804
7	Ц8-142-1	Ավազե անկողնակի պատրաստում մեկ մալուխի համար	100մ	2.5000	45.6866	114.2165
8	Е23-1	Ավազակոպճի ետլիցք խրամուղում	մ3	50.0000	3.5687	178.4350
9	Е27-42	Բազալտե խճե շերտի հիմնատակի վերականգնում 100մմ հաստությամբ	100մ2	0.8750	96.7591	84.6642
10	Е27-164-1	Խոշորահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	100մ2	0.8750	288.9025	252.7897
11	Е27-164-2	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	100մ2	0.8750	339.1841	296.7861
Մոնտաժային աշխատանքներ						0.00
12	Ц8-149-1	АВВГ-1 4х35մմ2 մալուխի փռում ՏԵ-ի կանալով	100մ	0.0700	145.5529	10.1887
13	Ц8-141-1	АВВГ-1 4х35մմ2 մալուխի փռում խրամուղում	100մ	2.5000	149.6901	374.2253
14	Ц8-148-1	АВВГ-1 4х35մմ2 մալուխի մոնտաժում կոնստրուկցիայով, կառավարման արկղին միացնելու համար	100մ	0.0300	148.0105	4.4403
15	ի.տ	Մալուխի ծածկում ազդանշանային ժապավենով b=150մմ	մ	250.0000	0.0753	18.8250
16	Ц8-572-1	Մետաղական պահարանի տեղադրում 600х800х250մմ դռնակով և փականով	հատ	1.0000	36.2170	36.2170
17	Ц8-525-2	Ավտոմատ անջատիչի մոնտաժում պահարանում 63Ա, D տիպի	հատ	1.0000	5.3390	5.3390
18	Ц8-613-2	Եռաֆազ երկսակագնային հաշվիչի մոնտաժում պահարանում 100Ա	հատ	1.0000	107.4787	107.4787
19	Ц8-531-5	Մագնիսական թողարկիչների մոնտաժում պահարանում 80Ա, ղեկավարման կոճակով	հատ	1.0000	47.8835	47.8835
20	Ц8-149-2	КГ 4х25 մմ2 մալուխի ձգում խողովակով, հորում	100մ	0.5500	763.6491	420.0070
21	Ц8-417-3	Վինիպլաստե խողովակ Ф50մմ	100մ	0.5500	158.1233	86.9678

		Ընդամենը				7196.9697
		Շահույթ	10.00%			719.6970
		Ընդամենը				7916.6667
		ԱԱՀ	20.00%			1583.3333
		Ընդամենը				9500.0000

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410081
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«ԱՆՆԱ 80» ՍՊԸ
ք. Վանաձոր. Դ. Դեմիրճյանի 20/23
ք.Երևան Անդրանիկի 131/1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150002510050100
ՀՎՀՀ 06906663

Ռ. Վարդերեսյան ----------
(ստորագրություն)
Կ. Տ

Հավելված թիվ 2
<< 31>> մարտի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/70>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոցի հարակից տարածքում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման և Կենտրոն վարչական շրջանի Արամի և Մաշտոցի պողոտայի հատման մասում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոցի հարակից տարածքում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման աշխատանքների**	**Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից**	**2017թ մայիսի 20-ը**
2	**Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի և Մաշտոցի պողոտայի հատման մասում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման աշխատանքների**	**Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից**	**2017թ մայիսի 20-ը**

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410081
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«ԱՆՆԱ 80» ՍՊԸ
ք. Վանաձոր. Դ. Դեմիրճյանի 20/23
ք.Երևան Անդրանիկի 131/1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150002510050100
ՀՎՀՀ 06906663

Ռ. Վարդերեսյան ----------
(ստորագրություն)
Կ. Տ

Հավելված թիվ 3
<<31>> մարտի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/70>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոցի հարակից տարածքում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման աշխատանքների	--	---	---	12 000 000	13 800 000	13 800 000	13 800 000	13 800 000	13 800 000	13 800 000	13 800 000	13 800 000	13 800 000
	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արամի և Մաշտոցի պողոտայի հատման մասում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման աշխատանքների	--	---	---	8 000 000	9 500 000	9 500 000	9 500 000	9 500 000	9 500 000	9 500 000	9 500 000	9 500 000	9 500 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012410081
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«ԱՆՆԱ 80» ՍՊԸ
ք. Վանաձոր. Դ. Դեմիրճյանի 20/23
ք.Երևան Անդրանիկի 131/1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150002510050100
ՀՎՀՀ 06906663

Ռ. Վարդերեսյան ----------
(ստորագրություն)
Կ. Տ

Հավելված թիվ 4
<< 31>> մարտի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/70>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<<31>> <<մարտի>> 2017թ. կնքված
N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/70 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/70

(պայմանագրի կատարման ապահովում)

<<31>> մարտի 2017 թ.

ք. Երևան

<<Աննա 80>>, ՍՊԸ-ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ռ. Վարդերեսյանի, անձնագիր AN 0530145 տրված 21.06.2013թ 009 կողմից>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բաֆֆու փողոցի հարակից տարածքում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման և Կենտրոն վարչական շրջանի Արամի և Մաշտոցի պողոտայի հատման մասում խորքային հորի կառուցման և գոյություն ունեցող ջրագծին միացման աշխատանքների** ձեռքբերման <<ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/70>> ծածկագրով բաց գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու

«Աննա 80» ՍՊԸ
Ք. Վանաձոր, Դ. Դեմիրճյան 20/23
Ք. Երևան, Անդրանիկի 131/7
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150002510050100
ՀՎՀՀ 06906663

Ռ. Վարդանյան ----------
(ստորագրություն)

Կ. Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Աննա 80» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 1150002510050100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 06906663

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12.Գումարը թվերով և բառերով՝ **2330000.0** /երկու միլիոն երեք հարյուր երեսուն հազար /

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/70

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ռ. Վարդերեսյան /_____/ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.